

**ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻԿՈՆԻԱՅԻ  
ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
(1220-ական թվականներ)  
**ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ առանցքային է վերջինիս արտաքին քաղաքականության և դիվանագիտության պատմության ուսումնասիրությունը: Հայկական թագավորությունը 13-րդ դարի 20-ական թվականներին գտնվում էր աշխարհագրական այնպիսի միջավայրում, որտեղ միջազգային իրավիճակը շարունակվում էր մնալ լարված, և հայկական թագավորությանը մշտապես սպառնում էին հարևան պետությունները: Վտանգավոր հարևաններից առանձնանում էր հատկապես Իկոնիայի սուլթանությունը: Այս պետությունը դեռևս Լևոն Մեծագործի թագավորության ժամանակաշրջանում բավականին անհանգստացրել էր հայկական թագավորությանը: Այդ իրավիճակը շարունակվեց նաև 13-րդ դարի 20-ական թվականներին: Ստեղծված պայմաններում չափազանց կարևոր էր, որ հայոց թագավորությունը կիրառի արտաքին ճիշտ քաղաքականություն, որպեսզի երկիրը չհայտնվի լուրջ խնդիրների առջև:

Կիլիկյան Հայաստանի և Իկոնիայի սուլթանության հարաբերությունների պատմության մասին որոշակի տեղեկություններ են հաղորդում ինչպես հայ, այնպես էլ օտարազգի պատմիչները: Նրանցից իմանում ենք, որ Իկոնիայի սուլթանությունը հզորացավ հատկապես սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կոբադի թագավորության տարիներին (1220-1237), որի վճռական գործողությունների շնորհիվ այդ պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Ինչպես վկայում է միջնադարի ասորի պատմիչ Աբուլ Ֆարաջը, Ալա էդ-դին Քեյ-Կոբադը աչքի էր ընկնում թե՛ իր արտաքինով և թե՛ խելքով ու կառուցվածքով<sup>1</sup>:

Նշենք նաև, որ Կիլիկիայի հայոց թագավորությունը խնդիրներ ուներ ոչ միայն արտաքին, այլև ներքին քաղաքական կյանքում: Բանն այն է, որ Լևոն Մեծագործի մահից հետո գահը ստանձնելու համար պայքար էր ծավալվել մի խումբ հավակնորդների միջև: Բնականաբար, նմանատիպ պայքարը և իրավիճակը չէին կարող բացասական ազդեցություն չունենալ երկրի արտաքին քաղաքական դիրքորոշումների վրա: Լևոն Մեծագործի և սուլթան Իզ էդ-դին Քեյ-Քավուսի միջև 1218 թ. կնքվում է հաշտության մի պայմանագիր, որի մի շարք դրույթներ գործնականում չէին իրագործվում: Պայմանագրի կնքումից անմիջապես հետո հայոց

<sup>1</sup>The Chronography of Gregory Abul Faraj, (Bar Habraeus), Vol. A, London, 1932, p. 402.

արքան հրաժարվում է մասնակցել Իկոնիայի սուլթանության՝ դեպի Չալես արշավանքին և որոշ ժամանակ անց մահանում է: Իզ էդ-դին Քեյ-Քաուսի հաջորդը՝ Ալա էդ-դին Քեյ-Կոբադը, որոշում է վերականգնել 1218 թ. պայմանագիրը և ստիպում է հայերին ընդունել սուլթանության գերիշխանությունը: Բացի այդ՝ Իկոնիայի սուլթանության համար Կիլիկիայի հայկական թագավորությունն ուներ աշխարհագրական կարևոր դիրք:

13-րդ դարի 20-ական թվականներին սկսվում են մի շարք ռազմական գործողություններ Կիլիկյան Չայաստանի և Իկոնիայի սուլթանության միջև, և այդ պատերազմում հայկական թագավորությունը ունենում է մեծ կորուստներ:

Իկոնիայի սուլթանության գործերը 1221 թ. արշավանք են ձեռնարկում Կիլիկիայի հայկական թագավորություն, ներխուժում են երկրի սահմանները և գրավում մի շարք տարածքներ<sup>2</sup>: Չետաքրքրական է Աբուլ Ֆարաջի տրամադրած այն փաստը, համաձայն որի՝ նշյալ արշավանքի պատճառ է դառնում հայկական թագավորությունում տիրող անկայուն վիճակը, որից էլ օգտվում է Իկոնիայի սուլթանը<sup>3</sup>: Ըստ մեզ՝ Աբուլ Ֆարաջի հաղորդումը կարող է ճշմարիտ լինել, քանի որ Իկոնիայի սուլթանությունը, գիտակցելով, որ այդքան էլ անուր չի գործում 1218 թ. հաշտության պայմանագիրը, վճռում է մի նոր արշավանք կատարել՝ վերհաստատելու հայկական թագավորության կախվածությունը և ենթակայությունը: Չատկապես այդ գործին կարող էր մեծապես օգնել հայոց թագավորությունում տիրող խառը և անկայուն իրավիճակը:

1221 թ. արշավանքով Իկոնիայի սուլթանությունը հայերից առգրավում է Կալոնորոսից մինչև Կոռիկոսի մոտակայքն ընկած տարածքները, որոնք Կիլիկիայի հայկական թագավորության ամենաբարեբեր հողերի մի մասն էին: Այդքանով երկու կողմերի միջև ռազմական գործողությունները չեն ավարտվում: 1222 թ. նրանց արշավանքը կրկնվում է, որի հետևանքով թշնամու զորքերը գրավում են Սևիլիան. «ՌՄԻԲ (1222) Ալատին սուլտանն էառ զՍիվիլա կռուով»<sup>4</sup>: Այս արշավանքից հետո հայոց թագավորության վիճակն ավելի է բարդանում:

Ուշադրության է արժանի Իկոնիայի սուլթանության պատմության ճանաչված հետազոտող Կ. Կաենի այն տեսակետը, համաձայն որի՝ սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կոբադին հաջողվում է հարևան քրիստոնյա փոքր պետություններին՝ Կիլիկյան

<sup>2</sup> Տե՛ս Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, կազմեց Վ. Ա. Չակոբյանը, հ. Բ, Երևան, 1956, էջ 64, ժամանակագրութիւն տեառն Սիխայէլի Ասորոյ պատրիարքի, Յերուսաղէմ, 1870, էջ 526, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Ա. Մաթևոսյանը, Երևան, 1986, էջ 125:

<sup>3</sup> Abul Faraj, նույն տեղում:

<sup>4</sup> Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դարերի, հ. Բ, էջ 64:

Չայաստանին, Վրաստանին և Տրապիզոնին, վասալական որոշ կարգավիճակ պարտադրել կամ նրանց իր դաշնակիցը դարձնել<sup>5</sup>: Ըստ երևույթին Կ. Կաենի տեսակետը կարող է ճշմարիտ լինել: Այս առնչությամբ հետաքրքիր է Լ. Տեր-Պետրոսյանի դիտարկումը: Չետագոտողը գտնում է, որ հայերի առերես հավատարմությունը ժամանակավոր բնույթ էր կրում, քանի որ վերջիններս միասնական ճակատ ստեղծելու նպատակով ակտիվ դիվանագիտական քայլեր են ձեռնարկում՝ Բյուզանդական կայսրության հետ մերձենալու ուղղությամբ<sup>6</sup>: Լ. Տեր-Պետրոսյանի տեսակետի ճշմարտացիությունը հիմնավոր է նրանով, որ Կիլիկիայի հայկական թագավորությունն ամեն ջանք գործադրում էր վասալական կախվածությունից դուրս գալու համար: Այդ են վկայում նաև ականավոր գիտնական Յ. Բարթիկյանի մի շարք հետազոտությունները<sup>7</sup>:

Չարկ ենք համարում հավելել, որ 1220-ական թվականներին կտրուկ բարդացան Կիլիկյան Չայաստանի և Անտիոքի դքսության հարաբերությունները: Դրանց պատճառով հայկական թագավորության արտաքին քաղաքական դրությունը խիստ վատացավ: Խնդիրն այն է, որ հայ իշխանները 1224 թ. բանտարկում են Ֆիլիպին Թիլ-Չամդունի բերդում<sup>8</sup>: Այդ իրավիճակում Ֆիլիպի հայրը՝ Բոհեմունդը, պապից թույլտվություն է խնդրում Կիլիկյան Չայաստան արշավելու համար: Մերժում ստանալով՝ նա դաշնակցում է Իկոնիայի սուլթանության հետ, և նրանք 1225 թ. համատեղ ուժերով հարձակվում են Կիլիկիայի հայկական թագավորության վրա<sup>9</sup>:

Ինչպես բացատրել Իկոնիայի սուլթանության նման դիրքորոշումն ու վարքագիծը: Չայտնի է, որ 1221-1222 թթ. նրանք մի շարք արշավանքներով արդեն զավթել էին հայկական թագավորությունից մի շարք տարածքներ և ստիպել հայերին ընդունելու իրենց գերիշխանությունը: Ամենայն հավանականությամբ այդ վասալական կախվածությունն այնքան ամուր չէր, և Իկոնիայի սուլթանությանը

<sup>5</sup> C. Cahen, Pre-Ottoman Turkey, London, 1968, p. 133, հղումը կատարված է Լ. Տեր-Պետրոսյանի Խաչակիրները և հայերը աշխատությունից, հ. ք, Երևան, 2007, էջ 300:

<sup>6</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. ք, էջ 301:

<sup>7</sup> Յ. Բարթիկյան, Չայ-բյուզանդական հետազոտություններ, հ. գ, Երևան, 2006, էջ 27-63:

<sup>8</sup> Թիլ-Չամդունը Դաշտային Կիլիկիայի գլխավոր բերդերից է, հայտնի է նաև Չամտուն անվանումով, Յ. Ս. Վ. Յովհաննեսեան, Չայկական Կիլիկիոյ բերդերն և բերդաքաղաքները, Վենետիկ, Ս. Ղազար, 1989, էջ 288:

<sup>9</sup> Միխայել Ասորի, էջ 525, Իբն Ալ-Ասիր, Լիակատար պատմություն, (թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի), Երևան, 1981, (Օտար աղբյուրները Չայաստանի և հայերի մասին), 11, Արաբական աղբյուրներ, Բ, էջ 332: Այդ մասին տե՛ս նաև Վ. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Չայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, Երևան, 1994, էջ 131:

հայտնի էր դարձել այն փաստը, որ հայերը գաղտնի կերպով փորձեր են անում կապեր հաստատել Բյուզանդական կայսրության հետ, որը, անշուշտ, ցանկալի չէր Իկոնիայի սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կոբադին: Բացի այդ՝ Իկոնիայի սուլթանության նոր տարածքային նվաճումներից հետո երկու կողմերի միջև դեռևս չէր կնքվել հիմնական պայմանագիր: Իբն Ալ-Ասիրն բավականին խորությամբ նկարագրում է դաշնակիցների արշավանքը դեպի Կիլիկյան Չայաստան, որի ընթացքում թշնամու զորքերը գրավում են 4 բերդ, սակայն ձմռան գալուն պես նահանջում<sup>10</sup>: Ցավոք, պատմիչը, նկարագրելով վերը նշված արշավանքը, չի նշում այն բերդերի անունները, որոնք ժամանակավորապես գրավվեցին դաշնակիցների զորքերի կողմից: Այդ մասին մեզ որոշակի տեղեկություններ է տրամադրում պատմիչ Միքայել Ասորին: Նա հաղորդում է, որ Իկոնիայի սուլթանության զորքերը, մտնելով Կիլիկիայի հայկական թագավորության սահմանները, գրավում են ճանճի, Կանչի և Մազոտ-խաչ բերդերը<sup>11</sup>. «Իսկ հայր նորա բրինձն Անտիոքու լուեալ՝ տրտմեցաւ յոյժ և զի անկարանայր առնուլ զվրեժն որդւոյն առաքէ առ Ալադին սուլտանն Յոռմոց, որոյ եկեալ էառ զճանճին և զԿանչին, և զՄազոտ խաչն, և արար վնաս բազում ի լեռնակողմանս...»<sup>12</sup>: Թեև պատմիչների տեղեկություններում որոշակի տարբերություններ կան գրավված բերդերի թվի վերաբերյալ, սակայն այստեղ կարևորն այն է, որ Միքայել Ասորին նշում է այն բերդերի անունները, որոնք նվաճվել էին դաշնակիցների կողմից: Կարևոր ենք նաև այն փաստը, որ հիշյալ պատմիչը նույնպես հաստատում է, որ Իկոնիայի սուլթանությունը միացավ Կիլիկյան Չայաստանի դեմ պատերազմին, որով էլ խիստ անբարենպաստ իրավիճակ ստեղծվեց հայկական թագավորության համար: Այս պայմաններում հայոց թագավորության դիվանագիտական ծառայությունը ճիշտ ռազմավարություն է ընտրում և, գիտակցելով խնդրի լրջությունը, դաշնակցում Չալեպի սուլթանության հետ<sup>13</sup>, որպեսզի նրանց միջամտությամբ կանխի հայկական թագավորության դեմ միասնական արշավանքի ծրագրերը: Եվ այդ հարցում Կիլիկիայի հայկական թագավորության դիվանագետները չեն սխալվում: Հարկ ենք համարում նաև ընդգծել, որ Չալեպի սուլթանությունն օգնության հասավ հայերին ոչ միայն այն բանի համար, որ իրեն ձեռնտու չէր Իկոնիայի սուլթանության հզորացումը, այլ նաև Անտիոքի դքսության: Այդ օգնության առաջին վկայությունն այն է, որ Չալեպի սուլթանությունը մեծ ճնշումներով ստիպում է Անտիոքի դքսությանը հրաժարվել իր նվաճողական ծրագրերից: Պատմիչ Իբն Ալ-Ասիրը տեղեկացնում է, որ հայկական

<sup>10</sup> Իբն Ալ-Ասիր, էջ 332:

<sup>11</sup> Այդ բերդերի մասին հանգամանորեն տե՛ս Յ. Մ. Վ. Յովհաննեսյան, նշվ. աշխ., էջ 167, 170, 185:

<sup>12</sup> Միքայել Ասորի, էջ 518:

<sup>13</sup> Վ. Տեր-Ղևոնդյան, նշվ. աշխ., էջ 132:

թագավորության համար չափազանց շահեկան եղավ հիվանդախնամ և տաճարական ասպետների Բոհեմոնդին չմիանալը՝ դեպի Կիլիկյան Չայաստան արշավելու<sup>14</sup>: Այստեղ հարց է առաջանում, թե որն է վերջիններիս՝ Իկոնիայի սուլթանության և Անտիոքի դքսության զորքերին չմիանալու պատճառը: Կարծում ենք՝ այստեղ կարող է լինել երկու մոտեցում. հայոց թագավորության արտաքին գերատեսչության ղեկավարները, գիտակցելով խնդրի լրջությունը, գաղտնի բանակցություններ վարեցին նրանց հետ և հասան վերջիններիս՝ արշավանքին չմիանալու համաձայնությանը: Չի բացառվում նաև, որ դրա դիմաց հայոց թագավորությունն որոշ ֆինանսական կամ տարածքային նվիրատվություն կատարած լինի: Չնարավոր է նաև, որ պապն է արգելել նրանց դա անել, քանի որ հայկական թագավորության աշխարագրական դիրքը կարևոր էր ռազմավարական տեսանկյունից: Ամեն դեպքում՝ հայոց թագավորությունը նշյալ ժամանակահատվածում ճիշտ դիվանագիտություն է կիրառում, որով էլ կանխվում են սպասվելիք ապագա արհավիրքները: Այս քայլը ցույց է տալիս, որ հայոց արքունիքում գործում էին խելացի, հաշվենկատ, թագավորության ապագայի մասին մտածող դիվանագետներ:

1226 թ. Կիլիկիայի հայոց գահին է բազմում Չեթում Ա-ն (1226-1269), որն անմիջապես ճանաչում է Իկոնիայի սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կոբադի գերիշխանությունը և վերահաստատում այն դաշինքը, որ 1218 թ. կնքվել էր Լևոն Մեծագործի և սելջուկյան սուլթան Իզ էդ-դին Քեյ-Քաուսի միջև: Այդ վկայում է նաև միջնադարի հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Ըստ նրա՝ թեև հայերը հավատարմության երդում են տալիս Իկոնիայի սուլթանին, սակայն դա չի փոխում Կիլիկիայի հայկական թագավորության կախումը սելջուկներից. «Չնազանդէր սիրով, և զոչ հնազանդսն բառնայր ի միջոյ...Արար սէր և միաբանութիւն ընդ սուլտանինհռոճոնոց, որում անուն էր Ալադին, որ ուներ զբազում աշխարհս ընդ ձեռամբ իւրով»<sup>15</sup>: Չեթում Ա արքայի նման վարքագիծը բացատրվում է հետևյալ կերպ: Չայոց արքան, տեղյակ լինելով նախորդ տարիների իրադարձություններին, այդ քայլին էր դիմել, որպեսզի վերջնական խաղաղություն հաստատվի երկու պետությունների միջև: Այս հարցում կարևոր էր նաև այն, որ 13-րդ դարի 20-ական թվականներին Իկոնիայի սուլթանությունը գտնվում էր իր ուժերի ծաղկման շրջանում և լուրջ անհանգստություններ կարող էր պատճառել հայկական թագավորությանը: Չմոռանանք, որ հայոց թագավորությունն այդ ժամանակ չունեի հիմնական և ուժեղ

<sup>14</sup> Իբն Ալ-Ասիր, էջ 252:

<sup>15</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 190:

դաշնակիցներ, որոնք ըստ անհրաժեշտության օգնության ձեռք կմեկնեին ընդդեմ ընդհանուր թշնամու: Կարծում ենք, այդ փաստն գիտակցում էին ինչպես նորընծա արքա Յեթում Ա-ն, այնպես էլ նրա հայրը՝ Կոստանդին սպարապետը, և մյուս հայ մեծամեծ իշխանները: Շուտով հայոց թագավորության և Իկոնիայի սուլթանության միջև նոր պայմանագիրը է կնքվում<sup>16</sup>, որը որոշակիորեն տարբերվում էր 1218 թվականին կնքված պայմանագրից:

Մինչ պայմանագրի բովանդակային դրույթներին անդրադառնալը, կցանկանայինք նախևառաջ կանգ առնել այն հարցի վրա, թե որ թվականին է կնքվել այն: Դժբախտաբար, այդ մասին հաղորդումները սակավաթիվ են միջնադարյան պատմիչների երկերում: Յեթում Ա արքայի և Իկոնիայի սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կոբադի միջև հաշտության բանակցությունների և կնքված պայմանագրի մասին հայոց պատմիչներից առաջինը խոսում է 13-րդ դարի Կիլիկյան Յայաստանի նշանավոր պետական, քաղաքական և զինվորական գործիչ Սմբատ Սպարապետը, համաձայն որի՝ երկու պետությունների միջև նոր պայմանագիրը կնքվում է 1226 թվականին.«Ի թուին ՈՐԵ եղև ուրախութիւն Յայոց. և եդին մեծ սէր ընդ Յոռմայ Պապն, և ընդ Ալամնաց Օնբրունն. և ընդ Ալատին Սուլտանն Յոռմոնց»<sup>17</sup>: Նշյալ խնդրի վերաբերյալ տեղեկություն ենք ստանում նաև նշանավոր պատմիչ Միքայել Ասորու ժամանակագրությունից: Ըստ պատմիչի՝ այն կնքվել էր դարձյալ 1226 թվականին. «Ի թուին Յայոց ՈՐԵ 675 միաբանութեամբ ամենայն իշխանացն տուին զՁաբէլ դուստր Լեւոն թագաւորին ի կնութիւն Յեթոյ որդւոյ պարոն Կոստանդեայ, և թագաւորեցուցին ի վերայ Յայոց, որ էր տղայ հասակաւ . և հայր նորա կարգաւորէր զթագավորութիւն որ և արար սէր ընդ Ալադին սուլտանն և հնազանդեցաւ...»<sup>18</sup>: Ինչպես նկատում ենք, թե՛ Սմբատ Սպարապետը և թե՛ Միքայել Ասորին Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության միջև կնքված պայմանագիրը թվագրում են նույն՝ 1226 թվականով: Մյուս պատմիչների մոտ նշյալ խնդրի մասին այլ հաղորդման չենք հանդիպում: Կարծում ենք, որ Միքայել Ասորու և Սմբատ Սպարապետի տեղեկությունները ճշմարիտ են, քանի որ դրանք ունեն ծանրակշիռ հիմքեր: Դա է վկայում այն, որ Սմբատ Սպարապետը ու՛ Միքայել Ասորին արժանահավատ աղբյուրներ են համարվում ժամանակակից պատմագրության մեջ: Մյուս կողմից՝ Սմբատ Սպարապետը եղել է գրեթե բոլոր դեպքերին ականատես, և հավանականությունը փոքր է, որ նա ոչ ճշգրիտ տեղեկություն հաղորդեր:

<sup>16</sup> Միխայել Ասորի, էջ 518-519, Սմբատայ Սպարապետի Պատմութիւն, Մոսկուա, 1856, էջ 112: Այդ մասին տե՛ս նաև Ձ. Պտուկյան, Կիլիկյան Յայաստանի դրամները, Վիեննա, 1963, էջ 93:

<sup>17</sup> Սմբատայ Սպարապետի Պատմութիւն, էջ 112:

<sup>18</sup> Միխայել Ասորի, էջ 518-519:

Այդ պայմանագրին շատ սահմանափակ և մակերեսորեն անդրադարձել են որոշ հետազոտողներ: Ա. Ալպոյաճյանը տեսակետ է հայտնում, որ պայմանագիրը կնքվել է Չեթուն արքայի ամուսնությունից քիչ հետո<sup>19</sup>: Այդ ամուսնությունը տեղի է ունեցել 1226 թվականի գարնանը, որից ենթադրում ենք, որ այն կնքվել է 1226 թվականին: Նույն՝ 1226 թվականի օգոստին տեսակետ է հայտնում նաև Լ. Տեր-Պետրոսյանը<sup>20</sup>: Հարցի շուրջ կարծիք է հայտնում նաև Ջ. Պտուկյանը, ըստ որի՝ պայմանագիրը կնքվել է 1228 թ.<sup>21</sup>, սակայն որևէ որոշակի աղբյուրով չի հիմնավորում իր տեսակետը: Քննարկվող հարցի շուրջ իր տեսակետն է հայտնել նաև Ս. Բռնազյանը, համաձայն որի պայմանագիրը կնքվել է 1220 թվականին<sup>22</sup>: Շարունակելով իր միտքը՝ հեղինակը առաջ է քաշում Իբն Բիբիի վկայությունը, ըստ որի հայոց արքան համաձայնվեց համատեղ դրամ կտրել՝ մի երեսին Չեթուն Ա արքայի, իսկ մյուս երեսին Իկոնիայի սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կոբադի պատկերներով<sup>23</sup>: Դժվար է համաձայնվել հեղինակի նման պնդման հետ, քանի որ 1220 թվականին Չեթուն Ա-ն դեռևս Կիլիկիայի արքան չէր և չէր կարող նման պայմանագիր կնքել: Բացի վերոնշյալ անձանցից՝ կան մի խումբ գիտնականներ, որոնք, հաշվի առնելով խնդրի բարդությունը, շրջանցում են պայմանագրի կնքման թվականը և չեն խոսում այդ մասին<sup>24</sup>:

Այսպիսով՝ ուսումնասիրելով միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկությունները, ինչպես նաև ժամանակակից գիտական գրականությունը՝ գալիս ենք այն եզրակացության, որ երկու պետությունների միջև պայմանագիրը կնքվել է 1226 թ.:

Այժմ անդրադառնանք պայմանագրի բովանդակային դրույթներին: Սմբատ Սպարապետը, որը տեղեկություններ է հաղորդում նշյալ դեպքերի մասին, պայմանագրի և նրա բովանդակային դրույթներից գրեթե ոչինչ չի նշում՝ հետազոտողներին դնելով ծանր կացության մեջ<sup>25</sup>: Ինչով բացատրել պատմիչի նման դիրքորոշումը: Կարծել, թե Սմբատը տեղյակ չէր պայմանագրի բովանդակությանը, մեղմ ասած միամտություն կլինի:

<sup>19</sup> Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 512:

<sup>20</sup> Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. ք, էջ 299:

<sup>21</sup> Ջ. Պտուկյան, նշվ. աշխ., էջ 11-12:

<sup>22</sup> Հայ ժողովրդի պատմություն, ակադեմիական հրատարակություն, հ. Գ, Երևան, 1976, էջ 700:

<sup>23</sup> Նույն տեղում:

<sup>24</sup> Կ. Մութաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 411-412, Գ. Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 176-177:

<sup>25</sup> Սմբատայ Սպարապետի Պատմութիւն, էջ 112:

Առավել հավանական կարող է լինել այն տեսակետը, որ դեպքերին ժամանակակից հայ պատմիչը, հասկանալով, որ Կիլիկիայի հայկական թագավորությունը պարտվողական պայմանագիր է կնքում՝ թշնամուն զիջելով մի շարք կարևոր տարածքներ և գնալով այլ զիջումների, չի ցանկացել դրանք իրագրել գալիք սերունդներին:

Խնդրո վերաբերյալ մի փոքր հաղորդման ենք հանդիպում Միքայել Ասորու ժամանակագրության մեջ: Հեղինակը նշում է, որ հայոց արքան հնազանդություն հայտնեց Իկոնիայի սուլթանին՝ պարտավորվելով նրան տարեկան 300 զինվոր ծառայության տալ. «և հնազանդեցաւ նմա՝ տալու նմա յամենայն ամի երեք հարիւր այր ի ծառայութիւն»<sup>26</sup>: Ինչպես նկատում ենք, այս հեղինակի տեղեկությունները ևս բավարար չեն: Պետք է նաև նշել, որ սույն հարցի մասին որոշ տեղեկություններ կան նաև Իբն Բիբի աշխատությունում: Այս ժամանակագիրն էլ փաստում է, որ Ալա էդ-դին Քեյ-Կոբադին հարկ էին վճարում մի շարք երկրներ, այդ թվում նաև Կիլիկիայի հայկական թագավորությունը<sup>27</sup>: Բացի այդ՝ հայոց արքան պարտավորվում էր Իկոնիայի սուլթանին տրամադրել 1000 ձիավոր և 500 աղեղնավոր<sup>28</sup>: Կարծում ենք՝ Միքայել Ասորու տեղեկությունը ավելի ճշգրիտ է, քանի որ վերջինս չեզոք պատմիչ է, իսկ Իբն Բիբին, լինելով սելջուկյան պետության ջատագովը, փորձել է գերազնահատել սուլթանության ձեռք բերած հաղթանակը: 1000 ձիավորի մասին հաղորդումը չափազանցված է, և այլ հեղինակների կողմից այն չի հաստատվում: Թե որքան էր կազմում վճարվելիք գումարը, դժբախտաբար սկզբնաղբյուրներում նման տեղեկություն չի պահպանվել:

Այժմ տեսնենք, թե ինչպիսի տեսակետներ են հաղորդում ժամանակակից հետազոտողները: Առաջին հետազոտողներից մեկը եղել է Ա. Ալպոյաճյանը: Նրա կարծիքով՝ հայոց արքան ընդունում է Իկոնիայի սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կոբադի գերիշխանությունը և նորոգում այն դաշինքը, որ կնքվել էր Լևոն Մեծագործի և սուլթան Իզ էդ-դին Քեյ-Քաուսի միջև<sup>29</sup>: Բացի այս կարծիքից՝ հետազոտողը որևէ այլ տեսակետ չի արտահայտում պայմանագրի մասին: Հետազոտվող խնդրին շատ մակերեսորեն անդրադարձել են Կիլիկյան Հայաստանի պատմության նշանավոր հետազոտողներ Գ. Միքայելյանը և Լ. Տեր-Պետրոսյանը<sup>30</sup>: Համաձայն այս հետազոտողների՝ հայոց արքան ճանաչում է Իկոնիայի սուլթանի գերիշխանությունը

<sup>26</sup> Միքայել Ասորի, էջ 519:

<sup>27</sup> ИБН Бу́бу, Селджук-Наме, www, vostlit, info (Վերցված է 20.03.2010 թ.):

<sup>28</sup> Կ. Մութաֆյան, նշվ. աշխ., էջ 471:

<sup>29</sup> Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 512:

<sup>30</sup> Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 177, Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. ք, էջ 299-300:



և պարտավորվում միասնական դրամ կտրել: Ինչպես նկատում ենք, հետազոտողները բավականին հետաքրքիր և կարևոր տեսակետ են հայտնում պայմանագրի մասին: Համոզված ենք, որ Գ. Միքայելյանի և Լ. Տեր-Պետրոսյանի տեսակետները ճշգրիտ են, քանի որ նման դրամներ իրականում թողարկվել են և ավանդվել մեզ: Մասնավորապես պահպանվել են արաբերեն լեզվով թողարկված երկու տեսակի դրամներ, որոնցից մեկում պատկերված են Կիլիկիայի հայոց արքա Հեթում Ա-ի և Ալա էդ-դին Քեյ-Կոբադի, իսկ մյուսում՝ հայոց արքայի և Գիյաս էդ-դին Քեյ-խոսրով Բ-ի պատկերները: Կարծում ենք, որ թողարկված դրամները ոչ միայն պարտադրված էին այն պայմանով, որպեսզի շեշտվի հայոց թագավորության կախվածությունը սուլթանությունից, այլ նաև այն բանի համար, որպեսզի զարկ տրվի երկու պետությունների միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացումը: Թողարկված դրամների մասին փաստը հետազոտել է Ջ. Պտուկյանը, որը մեկ անգամ ևս ապացուցում է նախորդ հետազոտողների արտահայտած կարծիքները<sup>31</sup>: Նշենք, որ թողարկված այդ դրամների քանակը շատ քիչ է եղել, որն էլ բերում է մեզ այն համոզման, որ հայոց թագավորությունն ընդամենը վասալական կախվածություն է ունեցել Իկոնիայի սուլթանությունից: Հետազոտվող թեմային անդրադարձել է նաև Կ. Մուրաֆյանը՝ որևէ նոր տեսակետ չարտահայտելով<sup>32</sup>: Ըստ հետազոտող Ս. Բոռնազյանի՝ Իկոնիայի սուլթանին հատկացված ձիավորների քանակը 100 է<sup>33</sup>: Ինչ վերաբերվում է աղեղնավորների քանակին, ապա այս հարցում Ս. Բոռնազյանը նշում է 500 թիվը<sup>34</sup>: Պետք է նշել, որ այստեղ կա կասկածելի մեկ հանգամանք: Հետազոտող Ս. Բոռնազյանը, թեև նշում է, թե այդ տեղեկությունները հաղորդում է Իբն Բիբին, սակայն բերում է այլ աղբյուր<sup>35</sup>: Ս. Բոռնազյանի առաջ քաշած տեսակետը չենք կարող անառարկելիորեն ընդունել, քանի որ հետազոտողը չի ապացուցում իր առաջադրած տեսակետը և արագորեն շրջանցում է նշյալ խնդիրը: Համոզված ենք, որ գոյություն ունի մի կարևոր դրույթ ևս: Ամենայն հավանականությամբ երկու կողմերը համաձայնության եկան նաև այն հարցում, որ հայոց արքան հարկ եղած դեպքում պիտի մասնակցի Իկոնիայի սուլթանության ռազմական արշավանքներին: Այդ է վկայում այն փաստը, որ երբ 1230 թ. Ջալալ էդ-դինի զորքերը մոտենում են մերձավորարևելյան տարածաշրջանին, Կիլիկիայի հայոց

<sup>31</sup> Ջ. Պտուկյան, նշվ. աշխ., էջ 12:

<sup>32</sup> Կ. Մուրաֆյան, նշվ. աշխ., էջ 411-412:

<sup>33</sup> Հայ ժողովրդի պատմություն, էջ 700:

<sup>34</sup> Նույն տեղում:

<sup>35</sup> H. Mane, Le sultan seljukide Keykulod I et l'Arménie, REA, 1929, p. 116, հղումը կատարվել է հայ ժողովրդի պատմության ակադեմիական հրատարակությունից, հ. գ, էջ 700:

զորքերը դաշնակցեցին Իկոնիայի սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կոբադի և Աշրաֆ Այուբյանի հետ և եռօրյա ճակատամարտում ջախջախում թշնամու զորքերին<sup>36</sup>:

Այսպիսով՝ քննելով միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկությունները և հետազոտելով ժամանակակից գիտական գրականությունը՝ գալիս ենք այն եզրակացության, որ Կիլիկիայի հայկական թագավորության և Իկոնիայի սուլթանության միջև կնքված պայմանագրի բովանդակային դրույթներն հանգում են հետևյալին.

1. Կիլիկիայի հայկական թագավորությունը ճանաչում է Իկոնիայի սուլթանության գերիշխանությունը:

2. Հայոց արքա Հեթում Ա-ն պարտավորվում է Իկոնիայի սուլթանին տրամադրել տարեկան 300 նիզակակիր:

3. Կիլիկյան Հայաստանը Իկոնիայի սուլթանությանն էր զիջելու մի շարք տարածքներ, որոնք գրավել էին սելջուկյան զորքերը: Դրանք էին Կալոնոռոսից մինչև Կոռիկոս ընկած տարածքները և Սևիլիան:

4. Հայկական թագավորությունը կրկնապատկում է Իկոնիայի սուլթանությանը տրվող հարկերի քանակը:

5. Կիլիկիայի հայկական թագավորությունը պարտավորվում է Իկոնիայի սուլթանության հետ համատեղ թողարկել միասնական դրամ՝ մի երեսին հայոց արքայի, իսկ մյուս երեսին՝ Սելջուկյան սուլթանների պատկերներով:

6. Կիլիկյան Հայաստանը պարտավորվում է մասնակցել Իկոնիայի սուլթանության՝ ապագայում ծրագրավորվող արշավանքներին:

7. Հայկական թագավորությունը դառնում է Իկոնիայի սուլթանության դաշնակիցը և բարեկամը:

Սրանք էին Հեթում Ա արքայի և Իկոնիայի սուլթան Ալա էդ-դին Քեյ-Կոբադի միջև կնքված պայմանագրի բովանդակային դրույթները: Ինչպես նկատում ենք, նշյալ պայմանագրով Կիլիկիայի հայկական թագավորությունը որոշակի փոփոխություններով վերահաստատում է տարիներ առաջ Լևոն Մեծագործի և Իկոնիայի սելջուկ սուլթան Իզ էդ-դին Քեյ-Քաուսի միջև կնքված հաշտության պայմանագիրը: Եթե 1218 թ. պայմանագրով Կիլիկիայի հայկական թագավորությունը ունեցավ տարածքային կորուստներ և ճանաչեց սուլթանության գերակայությունը,

---

<sup>36</sup> Սամուէլի քահանայի Անեցիոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 150, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 166-167, Աբուլ-Ֆիդա, Յակուտ Ալ-Համավի, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց՝ Յ. Նալբանդյանը, Երևան, 1965, էջ 235, Abul Faraj, էջ 394-395: Այդ մասին տե՛ս նաև T. Boase, The Kingdom of Cilician Armenia, London, 1978, p. 23 :

ապա այժմ դրանց ավելանում էր նաև միասնական դրամ կտրելը և այլ պարտավորվածություններ: Այս փաստը չափազանց կարևոր է երկու պետությունների հարաբերությունների քննության հարցում:

Հայկական թագավորության այդ վասալական կախվածությունը շարունակվում է մինչև 13-րդ դարի 40-ական թվականների առաջին կեսերը, այսինքն՝ այն ժամանակահատվածը, երբ տարածաշրջանում հայտնվում են մոնղոլները: Փաստորեն, նշյալ պայմանագրով հայկական թագավորությունը կրկին դառնում է Իկոնիայի սուլթանության վասալը<sup>37</sup> և ընկնում որոշակի կախվածության մեջ: Այդ կախվածությունը հիմնականում վերաբերում էր թագավորության արտաքին քաղաքականությանը: Մասնավորապես Իկոնիայի սուլթանության համար կարևոր էր ոչ միայն Կիլիկիայի աշխարհագրական դիրքը, այլև հարկ եղած դեպքում հայկական թագավորության ռազմական ուժի օգտագործումը: Ի հակադրություն սրա՝ երկրի ներքին քաղաքականության հարցերում Կիլիկիայի թագավորության ղեկավարությունն ամբողջովին մնում էր անկախ: Փաստենք, որ նմանատիպ իրավիճակ է ստեղծվում նաև այն ժամանակ, երբ հայոց թագավոր Հեթում Ա-ն պայմանագիր կնքեց մոնղոլական պետության առաջնորդ Մանգու մեծ խանի հետ: Այս փաստը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ, իրոք, տարածաշրջանի պետություններին հետաքրքրում էր բացառապես Կիլիկիայի արտաքին քաղաքականությունը: 1226 թ. պայմանագրի կնքումից հետո հայկական թագավորության հարաբերություններն Իկոնիայի սուլթանության հետ բավականին բարելավվում են: Եթե նախորդ տարիներին Կիլիկիայի հայկական թագավորությունը ստիպված էր դիմագրավել Իկոնիայի սուլթանության արշավանքները դեպի Կիլիկյան Հայաստան, ապա այս պարագայում սկսում է հանդես գալ որպես դաշնակից, մասնակցում ընդհանուր թշնամու դեմ պայքարում: Կարծում ենք, որ այս նվաճմանը հայկական թագավորությունը կարողանում է հասնել հայ դիվանագետների ճշգրիտ գործունեության շնորհիվ:

---

<sup>37</sup> Wikipedia.org/wik/karamano. Վերցված է 15.04.2010 թ., Գ. Միքայելյան, նշվ. աշխ., էջ 177, Զ. Պտուկյան, նշվ. աշխ., էջ 93:

## Резюме

В статье раскрывается история взаимоотношений Киликийского Армянского царства с Иконийским султанатом в 20-е годы XIII столетия. Впервые делается попытка представить их двусторонние военные и дипломатические отношения. Автор, основываясь на средневековые источники, подробно представляет походы Иконийского султаната на Киликийскую Армению и территориальные потери армянского царства.

Во второй части работы автор впервые историографии представляет Мирный договор, подписанный армянским царем Хетумом Первым и султаном Иконии Алаадином Кай Кубадом. Автор доказывает, что Договор между двумя странами был подписан в 1226, а не в 1228 году. В работе подробнейшим образом изложены основные положения Договора и то положение, которое сложилось во внешней политике Киликийского Армянского царства после подписания указанного Договора.

## Summary

**The article focuses on the history of the relationship between the Kingdom of Cilician Armenia and the Egyptian Sultanate referring particularly to the war between the Armenians and the Mamluks in the late 60-ies of the XIII century as well as the peace negotiations and agreement between them.**

**The article also focuses on the content-issues of the peace agreement between the Armenians and the Mamluks signed in Antioch in 1268. It is stated and proved that the agreement was signed in 1226 and not in 1228 as stated earlier. It is worth mentioning the interpretation of certain issues of the agreement that have been carried out on the bases of both medieval Armenian and foreign sources. The information on the loss of the territories of the Armenian Kingdom and the formation of the new boundaries of the Cilician Armenia is particularly of great importance.**

Վենետիկ Բազմալեզ